



Ի. ՍՏԱԼԻՆ

ԳԼԽԱՊՏՈՒՅՏ  
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1930

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

# Ի. ՄՏԱԼԻՆ

Գ Լ Խ Ա Պ Տ Ո Ի Յ Տ  
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կարևորագույն շարժման հարցերի շուրջը

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939



11-28426 97

И. СТАЛИН

ГОЛОВОКРУЖЕНИЕ ОТ УСПЕХОВ  
Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939

Կուրանտեսային շարժման բնադավառում Խորհրդային  
Իշխանության ունեցած Հաջողությունների մասին այժմ բո-  
լորն են խոսում: Մինչև անգամ թշնամիներն ստիպված են  
ընդունելու լուրջ Հաջողությունների առկայությունը: Իսկ  
այդ Հաջողություններն իրոք վոր մեծ են:

Մա փաստ է, վոր առ 20-ն փետրվարի ս. թ. ԽՍՀՄ-ում  
արդեն կուլեկտիվացված է դյուրացիական տնտեսություննե-  
րի 50%-ը: Այս նշանակում է, վոր առ 20-ն փետրվարի  
1930 թվի մենք հնդամյա պլանը գերակատարել ենք ավելի  
քան յերկու անգամ:

Մա փաստ է, վոր առ այս տարվա փետրվարի 28-ը  
կուրանտեսություններն արդեն կարողացել են դարձնան ցան-  
քերի համար ամբարել 36 միլիոն ցենտներից ավելի սերմա-  
ցու, այսինքն՝ պլանի 90%-ից ավելին, այսինքն՝ մոտ 220  
միլիոն փութ: Չի կարելի չընդունել, վոր միմիայն կուլտը-  
տեսային դժով 220 միլիոն փութ սերմացու հավաքելը—հա-  
ցամթեքման պլանը հաջող կատարելուց հետո ամենահա-  
կայական նվաճում է ներկայացնում:

Ինչի՞ մասին է խոսում այս ամենը:

Այն մասին, վոր գյուղի արմատական շրջադարձը դե-  
պի սոցիալիզմ կարելի յե արդեն ապահովված համարել:

Կարիք չկա ապացուցելու, վոր այդ Հաջողությունները  
մեծագույն նշանակություն ունեն մեր յերկրի բախտի հա-  
մար, ամբողջ բանվոր դասակարգի՝ վորպես մեր յերկրի  
դեկավար ուժի՝ համար, վերջապես, բուն իսկ կուսակցու-  
թյան համար: Ել չխոսելով ուղղակի դործնական արդյունք-  
ների մասին, դրանք, այդ Հաջողությունները, հսկայական  
նշանակություն ունեն բուն իսկ կուսակցության ներքին  
կյանքի համար, մեր կուսակցության դաստիարակության  
համար: Նրանք մեր կուսակցությանն առույգության է իր  
ուժերին հախատալու վորի յեն ներշնչում: Նրանք բանվոր

դասակարգին զինում են հավատով դեպի մեր գործի հաղթութիւնը: Նրանք մեր կուսակցութեանն են մոտեցնում նոր միլիոնանոց ռեզերվներ:

Այստեղից՝ կուսակցութեան խնդիրը—ամրացնել ձեռք բերված հաջողութիւնները և զրանք պլանաչափ կերպով ոգտագործել հետագա առաջխաղացման համար:

Բայց հաջողութիւններն ունեն նաև իրենց ստվերոտ կողմը, մանավանդ յերբ նրանք համեմատաբար «հեշտ» են ձեռք բերվում, այսպես ասած՝ «անակնկալի» կարգով: Այդպիսի հաջողութիւնները յերբեմն ինքնահալանութեան ու մեծամտութեան վուրի յեն պատկաստում: «Մենք ամեն ինչ կարող ենք», «Մեզ համար ամեն ինչ դատարկ բան է»: Նրանք, այդ հաջողութիւնները, հաճախ արբեցնում են մարդկանց, ընդվորում մարդկանց գլուխը հաջողութիւններից սկսում և պտտվել, կորսվում և չափի զգացումը, կորսվում է իրականութիւնը հասկանալու ընդունակութիւնը, յերևան և դալիս իր ուժերը գերազնահատելու և հակառակորդի ուժերը թերազնահատելու ձգտում, յերևան են դալիս սոցիալիստական շինարարութեան բոլոր հարցերը «մի ակնթարթում» լուծելու արկածախնդրական փորձեր: Այստեղ արդեն տեղ չի մնում հոգալու այն մասին, վորպեսզի ամրացնենք ձեռք բերված հաջողութիւնները և պլանաչափ ոգտագործենք զրանք հետագա առաջխաղացման համար: Մենք ի՞նչ կարիք ունենք ամրացնելու ձեռք բերված հաջողութիւնները, — մենք այնպես էլ կկարողանանք «մի ակնթարթում» վազելով հասնել սոցիալիզմի լիակատար հաղթութեանը: «Մենք ամեն ինչ կարող ենք», «Մեզ համար ամեն ինչ դատարկ բան է»:

Այստեղից՝ կուսակցութեան խնդիրը—վճռական պայքար մղել գործի համար այդ վտանգավոր ու վնասակար տրամադրութիւնների դեմ և զրանք կուսակցութեանից դուրս վռնդել:

Չի կարելի ասել, թե գործի համար այդ վտանգավոր ու վնասակար տրամադրութիւնները փոքրիչատե լայն տարածում ունեն մեր կուսակցութեան շարքերում: Բայց նրանք, այդ տրամադրութիւնները, այնուամենայնիվ կան մեր կուսակցութեան մեջ, ընդվորում հիմքեր չկան պնդե-

լու, թե նրանք չեն ուժեղանա: Յեւ յիժե նրանք, այդ տրամադրութիւնները, մեղանում քաղաքացիութեան իրավունք ստանան, ապա կարելի յե չկասկածել, վոր կուստետեսային շարժման գործը նշանակելիորեն կթուլացվի ու այդ շարժման վիժեցման վտանգը կարող է իրականութիւն դառնալ:

Այստեղից՝ մեր մամուլի խնդիրները—սխտեմատիկաբար մերկացնել այս ու սրանց նման հակալենինյան տրամադրութիւնները:

Միջանի փաստ.

1. Մեր կուստետեսային քաղաքականութեան հաջողութիւնները բացատրվում են, ի միջի այլոց, նրանով, վոր նա, այդ քաղաքականութիւնը, հենվում է կուստետեսային շարժման կամավորութեան ու ԽՍՀՄ-ի տարբեր շրջանների պայմանների բազմազանութեան հաշվառման վրա: Կուստետեսութիւններն ուժով արմատափորել չի կարելի: Դա հիմար ու ռեակցիոն բան կլինի: Կուստետեսային շարժումը պետք է հենվի դուրաքիութեան հիմնական մասսաների ակտիվ աջակցութեան վրա: Չի կարելի դարգացած շրջանների կուստետեսային շինարարութեան լավ որինակները մեխանիկորեն փոխադրել չդարգացած շրջանները: Դա հիմար ու ռեակցիոն բան կլինի: Այդպիսի «քաղաքականութիւնը» մի հարվածով սրակազերծ կաներ կուլեկտիվացման դադարը: Կուստետեսային շինարարութեան տեմպն ու մեթոդները վորոշելիս հարկավոր է ամենայն խնամքով հաշվի առնել պայմանների բազմազանութիւնը ԽՍՀՄ-ի տարբեր շրջաններում:

Կուստետեսային շարժման մեջ մեղանում բոլոր շրջաններից հատիկային շրջաններն են առաջ կանգնած: Ինչո՞ւ: Նախ՝ այն պատճառով, վոր մենք այդ շրջաններում ունենք ամենից մեծ քանակով արդեն ամրապնդված խորհրտետեսութիւններ ու կուստետեսութիւններ, վորոնց շնորհիվ դուրաքիները հնարավորութիւն ունեն յեն համոզվելու նոր տեխնիկայի ուժին ու նշանակութեանը, տետետեսութեան նոր, կուլեկտիվ կազմակերպութեան ուժին ու նշանակութեանը: Յերկրորդ, այն պատճառով, վոր այդ շրջանները հացամթերումների կամպանիաների ժամանակ կուլեկտիւնային դեմ

մղած պայքարի յերկամյա դպրոց են անցել, վորը չէր կարող չհեշտացնել կոլտնտեսային շարժման դործը: Վերջապես այն պատճառով, վոր այդ շրջաններին վերջին տարիների ընթացքում ամենաուժեղ կերպով լավագույն կադրեր են մատակարարվել արդյունաբերական կենտրոններից:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե այդ առանձնապես նպաստավոր պայմանները կան նաև ուրիշ շրջաններում, որինակ՝ սպառողական շրջաններում, ինչպիսիք են մեր հյուսիսային մարզերը, կամ դեռևս հետամնաց աղքատությունների շրջաններում, ինչպիսին է, ասենք, Թուրքեստանը:

Վո՛չ, այդ չի կարելի ասել:

Պարզ է, վոր ԽՍՀՄ-ի տարբեր շրջանների պայմանների բարձագանություն հաշվառման սկզբունքը, կամավորություն սկզբունքի հետ միասին, կոլտնտեսային առողջ շարժման ամենալուրջ նախադրյալներից մեկն է:

Իսկ յերբեմն մեզ մոտ իրականում ի՞նչ է տեղի ունենում: Կարելի՞ յե արդյոք ասել, թե կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքը չի խախտվում մի շարք շրջաններում: Վո՛չ, ցավոք սրտի այդ չի կարելի ասել: Հայտնի յե, որինակ, վոր սպասողական գոտու մի շարք հյուսիսային շրջաններում, վորտեղ անհասարակ կոլտնտեսություններ կազմակերպելու համար նպաստավոր պայմաններ համեմատաբար ավելի թիչ կան, քան հատիկային շրջաններում, կոլտնտեսությունների կազմակերպման նախապատրաստական աշխատանքը ջանում են հաճախ նեմգափոխել կոլտնտեսային շարժման չինովնիկական դեկրետազրույթով, կոլտնտեսությունների բաժնի մեծացման վերաբերյալ թղթե բանաձևերով, թղթե կոլտնտեսությունների կազմակերպմամբ, կոլտնտեսություններ, վորոնք դեռ իրականություն մեջ չկան, բայց վորոնք «գոյություն» մասին կան մի կույտ սնապարծ բանաձևեր: Կամ վերցնենք Թուրքեստանի միջանի շրջանները, վորտեղ անհասարակ կոլտնտեսություններ կազմակերպելու համար նպաստավոր պայմաններ ե՛լ ավելի թիչ կան, քան սպառողական գոտու հյուսիսային մարզերում: Հայտնի յե, վոր Թուրքեստանի մի շարք շրջաններում արդեն փորձեր են յեղել «հասնելու և անցնելու» ԽՍՀՄ-ի առաջավոր շրջաններից՝ գինվորական

ուժով սպառնալու միջոցով, վորոգման ջրից ու արդյունաբերական ապրանքներից այն գյուղացիներին դրկելու սղառնալիքի միջոցով, վորոնք առայժմ չեն ուզում կոլտնտեսություն մտնել:

Ի՞նչ ընդհանուր բան կարող է լինել ունտեր Պրիշիբեյեվի այդ «քաղաքականություն» ու կուսակցություն քաղաքականություն միջև, վորը կոլտնտեսային շինարարության դործում հեղափոխ է կամավորության ու տեղական առանձնահատկությունների հաշվառման վրա: Պարզ է, վոր դրանց միջև վոչ մի ընդհանուր բան չկա և չի կարող լինել:

Ո՞ւմ են պետք կոլտնտեսային շարժման այդ ծուռմաները, այդ չինովնիկական դեկրետազրույթը, այդ անարժան սպառնալիքները գյուղացիների նկատմամբ: Վոչ վոքի՛, բացի մեր թշնամիներից:

Ինչի՞ կարող են հանդեցնել դրանք, այդ ծուռմաները: Մեր թշնամիներն ուժեղացմանն ու կոլտնտեսային շարժման դադախարների պակասը մամնը:

Պարզ չե՞ արդյոք, վոր այդ ծուռմաների հեղինակները, վորոնք իրենց «ձախ» են յերևակայում, իրականում ջուր են լցնում ալ ուզորտունիզմի ջրաղացին:

2. Մեր կուսակցություն քաղաքական ստրատեգիայի մեծագույն արժանիքներից մեկն այն է, վոր յուրաքանչյուր տվյալ մոմենտում նա կարողանում է ընտրել շարժման հիմնական ողակը, վորին կառչելով՝ նա հետո ամբողջ շրջան քաշում է դեպի մի ընդհանուր նպատակ, վորպեսզի գլուխ բերի խնդրի լուծումը: Կարելի՞ յե արդյոք ասել, թե կոլտնտեսային շինարարության սիստեմի մեջ կուսակցությունն արդեն ընտրել է կոլտնտեսային շարժման հիմնական ողակը: Այո՛, կարելի յե և պետք է:

Վորն է դա, այդ հիմնական ողակը:

Գուցե հոյը միատեղ մշակելու ընկերությունները: Վո՛չ, այդ չե: Հոյը միատեղ մշակելու ընկերությունները, վորտեղ արտադրության միջոցները դեռ հանրայնացված չեն, կոլտնտեսային շարժման արդեն անցած աստիճանն են ներկայացնում:

Գուցե գյուղատնտեսական կոմունան: Վո՛չ, կոմունան չե: Կոմունաներն առայժմ դեռ յեղակի յերևույթ են կոլ-

անտեսային շարժման մեջ: Պայմանները դեռևս չեն հասու-  
նացել գյուղատնտեսական կոմունաների՝ փորպես գերա-  
կշռող ձևի համար, փորտեղ հանրայնացված և վո՛չ միայն  
ամբողջ արտադրությունը, այլև բաշխումը:

Տվյալ մոմենտում կոլտնտեսային շարժման հիմնական  
ողակը, նրա գերակշռող ձևը, փորին հարկավոր և այժմ  
կառչել, գյուղատնտեսական արտելն է:

Գյուղատնտեսական արտելում, գլխավորապես հատի-  
կային տնտեսության դժով, հանրայնացված են արտադրու-  
թյան հիմնական մեթոդները—աշխատանքը, հողորդապոր-  
ծումը, մեքենաներն ու այլ ինվենտարը, բանոց անասուննե-  
րը, տնտեսավարական շինությունները: Նրա մեջ չեն հան-  
րայնացվում տնամերձ հողերը (մանր բանջարանոցները,  
մանր այգիները), բնակելի շենքերը, կաթնատու անասուն-  
ների փորոչ մասը, մանր անասունները, ընտանի թռչուննե-  
րը և այլն: Արտելը կոլտնտեսային շարժման հիմնական  
ողակն է, փորովհետև նա հատիկային պրոբլեմի լուծման  
ամենից ավելի նպատակահարմար ձևն է: Իսկ հատիկային  
պրոբլեմը հիմնական ողակ է հանդիսանում ամբողջ գյուղա-  
տնտեսության սիստեմի մեջ, փորովհետև առանց նրա լուծ-  
ման հնարավոր չէ լուծել վո՛չ (մանր ու խոշոր) կենդանա-  
բուծության պրոբլեմը, վո՛չ տեխնիկական ու հատուկ կուլ-  
տուրաների պրոբլեմը, փորոնք հիմնական հումքն են տա-  
լիս արդյունաբերության համար: Ահա թե ինչու գյուղա-  
տնտեսական արտելը տվյալ մոմենտում հիմնական ողակ է  
հանդիսանում կոլտնտեսային շարժման սիստեմում:

Մրանից է յեղում կոլտնտեսությունների «Որինակելի  
կանոնադրությունը», փորի վերջնական տեքստը հրապա-  
րակվում է այսոր\*:

Մրանից էլ պետք է յեղենք մեր կուսակցական ու խոր-  
հրդային աշխատողները, փորոնց պարտականություններից  
մեկն էլ այն է, փոր ուսումնասիրեն այդ կանոնադրությունն  
ըստ էությունից ու այն մինչև վերջը կենսադործեն:

Այս է կուսակցության գիրքավորումը տվյալ մոմեն-  
տում:

Կարելի՞ չէ արդյոք ասել, թե կուսակցության այս գիր-  
քավորումը կենսադործվում է առանց խախտումների ու  
աղավաղումների: Վո՛չ, ցավոք սրտի այդ չի կարելի ասել:  
Հայտնի չէ, փոր ԽՍՀՄ-ի մի շարք շրջաններում, փորտեղ  
կոլտնտեսությունների դոյության համար մղվող պայքարը  
դեռ հեռու չէ ավարտված լինելուց, և փորտեղ արտելները  
դեռ ամբացված չեն, արտելի շրջանակներից դուրս ցատ-  
կելու և մեկեն դեպի գյուղատնտեսական կոմունան  
թուիչք դործելու փորձեր են լինում: Արտելը դեռևս ամբաց-  
ված չէ, իսկ նրանք արդեն «հանրայնացնում են» բնակելի  
շենքերը, մանր անասուններին, ընտանի թռչուններին, ընդ-  
փորում այդ «հանրայնացումն» այրասերվում—դառնում է  
թղթե—բյուրոկրատական դեկրետադրում, փորովհետև դեռ-  
ևս չկան այդպիսի հանրայնացումն անհրաժեշտ դարձնող  
պայմաններ: Կարելի չէ կարծել, թե հատիկային պրոբլեմն  
արդեն լուծված է կոլտնտեսություններում, թե այն ար-  
դեն զերանցված աստիճան է, թե տվյալ մոմենտում հիմ-  
նական խնդիրը վո՛չ թե հատիկային պրոբլեմի լուծումն է,  
այլ կենդանաբուծության ու թռչնաբուծության պրոբլեմի  
լուծումը: Հարց է ծագում. ո՞ւմ է հարկավոր կոլտնտեսա-  
յին շարժման տարբեր ձևերը մի տեղ զիջելու այդ քաղա-  
քյոզական «աշխատանքը»: Ո՞ւմ է հարկավոր այդ հիմար  
ու դործի համար վնասակար առաջ ընկնելը: Կոլտնտեսա-  
կան—գյուղացուն գրգռել բնակելի շենքերի, բոլոր կաթնա-  
տու անասունների, բոլոր մանր անասունների, ընտանի թռ-  
չունների «հանրայնացմամբ», յերը հատիկային պրոբլեմը  
դեռևս լուծված չէ, յերը կոլտնտեսությունների արտելային  
ձևը դեռևս ավրացված չէ,—միթե պարզ չէ՞, փոր այդպիսի  
«քաղաքականությունը» կարող է հաճելի ու շահավետ լինել  
միայն մեր յերգվյալ թշնամիներին: Այդպիսի կայտառ  
«հանրայնացողներից» մեկը մինչև անգամ այն տեղն է  
հասնում, փոր արտելին հրաման է տալիս, փորտեղ նա կար-  
դադրում է «յերք օրվա ընթացքում հաշվի առնել յուրա-  
քանչյուր անտեսության բոլոր ընտանի թռչուններին», սահ-  
մանել հաշվառման ու հսկման հատուկ «հրամանատարների»  
պաշտոն, «արտելում գրավել իշխող բարձունքները», «զե-  
կավարել սոցիալիստական մարտը՝ առանց պոստերը լքե-

\* «Правда», 2 մարտի, 1930 թ.:

լու», և—պարզ բան է—ամբողջ արտելը բռան մեջ սեղմել: Ի՞նչ է սա—կոլտնտեսութեան ղեկավարման քաղաքականութեան, թե՞ նրա քայքայման ու վարկաբեկման քաղաքականութիւն: Ել յետ չեմ խոսում այն, թող թույլ տրվի ասել, «հեղափոխականները» մասին, վորոնք արտելի կազմակերպման դործն սկսում են յեկեղեցիները դանդերը հանելով: Հասնել դանդերը,—ասացե՛ք ինչդեմ՝ ինչպիսի՞ հեղղափոխականութեան (рреволюционность):

Ի՞նչպէս կարող էյին մեր մեջ ծագել «Հանրայնացման» դործի քայլադրողական այդ վարժութիւնները, քայլադրողները իրենց իսկ վրայով թռչելու ծիծաղաշարժ այդ փորձերը, փորձեր, վորոնք նպատակ ունեն դանց առնելու դատակարգերն ու դատակարգային կռիվը, իսկ իրականում ջուր են լցնում մեր դատակարգային թշնամիները՝ ջրաղացին: Դրանք կարող էյին ծագել կոլտնտեսային շինարարութեան ճակատում ունեցած մեր «հեշտ» ու «անակնկալ» հաջողութեանների մթնոլորտում միայն: Դրանք կարող էյին ծագել կուսակցութեան մի մասի շարքերում յեղող քայլադրողական այն արամադրութիւնների հետևանքով միայն, թե՛ «Մենք ամեն ինչ կարո՞ղ ենք», «Մեզ համար ամեն ինչ դատա՞րկ բան է»: Դրանք կարող էյին ծագել միայն այն բանի հետևանքով, վոր մեր ընկերներից վոմանց գլուխը հաջողութեաններից պտույտ յեկալ, և նրանք մի րոպե դրկվեցին մտքի պայծառութեանից ու հայացքի աչալըջութեանից:

Վորպեսզի շտկենք մեր աշխատանքի գիծը կոլտնտեսային շինարարութեան բնագավառում, պետք է վերջ դնենք այդ արամադրութեաններին:

Այս է հիմա կուսակցութեան հերքական խնդիրներից մեկը:

Ղեկավարման արվեստը լուրջ բան է: Ծարժումից հետո մնալ չի կարելի, վորովհետև հետ մնալ—նշանակում է կարվել մասնաներից: Բայց առաջ վաղել էլ չի կարելի, վորովհետև առաջ վաղել—նշանակում է կորցնել կապը մասնաների հետ: Ով ուզում է ղեկավարել շարժումը և դրա հետ մեկտեղ պահպանել կապերը միլիոնավոր մասնաների

հետ, նա պետք է պայքար մղի յերկու ճակատի վրա—թե՛ հետ մնացողների դեմ, թե՛ առաջ վաղողների դեմ:

Մեր կուսակցութեանն այն պատճառով է ուժեղ ու անպարտելի, վոր շարժումը ղեկավարելով՝ նա կարողանում է պահպանել ու բազմապատկել իր կապերը բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասնաների հետ:

«Правда» № 60, 2 մարտի 1930 թ.:

Հայերեն թարգմ. խմբ. Բ. Մարտիրոսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Մբբադրիչ Վ. Զիլիբյան

Կոնսուլ սրբադրիչ Լ. Աբովյան

Դավլեհի լիազոր № Կ—2467, ճրատ № 721,

Պատվեր № 161, արժամ 5,000

Թղթի չափոր 84×110 <sup>1</sup>/<sub>32</sub> (32,550 տպ. նիշ 1 տպ. ծավալում)

<sup>3</sup>/<sub>8</sub> տպ. տամուր <sup>3</sup>/<sub>8</sub> թերթ թուղթ

Հանձնված է արտադրության 16/VIII 1939 թ.

Ստորադրված է տպագրելու 26/VIII 1939 թ.

Գինը 25 կոպ.

Պատկերա—Քաղաքական գրականության հրատարակչության  
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928081



433

3 Oct. 1955

9164 25 4.

11  
28426

И. СТАЛИН  
ГОЛОВОКРУЖЕНИЕ ОТ УСПЕХОВ  
Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939